600.0304.09.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2016 թվականի №304Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ №92 ԵՎ №92/1 ՇԵՆՔԵՐԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2016 թվականի օգոստոսի 9-ի №03/3508-16 գրությունը, որով վերջինս խնդրում է Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Մելիք-Օհանջանյան փողոցի №92 և №92/1 շենքերի 28 բնակարանների սպառման համակարգերն (այսուհետ՝ սպառման համակարգեր) էլեկտրական ցանցին միացնել առանց միացման վճարի գանձման,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2016 թվականի սեպտեմբերի 27-ի 04-ԴԳ02/3885 գրությունը, որով Ընկերությունը հայտնում է, որ պատրաստ է սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման աշխատանքներն իրականացնել առանց միացման վճարի գանձման,

գ) Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավարի սույն թվականի օգոստոսի 8-ի №280 գրությունը, համաձայն որի՝ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի Մելիք-Օհանջանյան փողոցի №92 և №92/1 շենքերը նախատեսվում է հատկացնել հրդեհված և վթարային բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականատերերին.

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ սպառման համակարգերն՝

   1) Ընկերության էլեկտրական ցանցին միացվում են առանց միացման վճարի գանձման.

   2) էլեկտրական ցանցին միացման համար դիմում ներկայացնում և Ընկերության հետ էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքում է Սյունիքի մարզպետարանը.

   3) էլեկտրական ցանցին միացման դիմումի ներկայացման օրվանից մինչև էլեկտրական ցանցին միացման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու և էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման օրվանից մինչև էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու առավելագույն ժամկետները սահմանվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման 1-ին կետով հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների համապատասխանաբար 13.3-րդ և 13.5-րդ կետերի համաձայն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
9 նոյեմբերի 2016թ.
ժամը 16[00]